ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-834-14.07.2015-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

Օրենքի նախագծով առաջարկվում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասից հանել «7-օրյա ժամկետում» բառերը, որի արդյունքում վերացվում է սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտի՝ դատական կարգով բողոքարկման ժամկետային սահմանափակումը.

2) 3-րդ մասում «քննարկում է» բառերը փոխարինել «ի գիտություն է ընդունում» բառերով, որի արդյունքում ստացվում է, որ հանձնաժողովն ի գիտություն է ընդունում դատարանի վճիռը և ընդունում համապատասխան որոշում:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ՝

1. Առաջին առաջարկության վերաբերյալ անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ առաջարկվող կարգավորումն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել իրավական անորոշության: Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածի պահանջների՝ Հայաստանի Հանրապետությունն իրավական պետություն է, իսկ իրավական պետության կարևորագույն սկզբունքներից մեկն իրավական որոշակիության սկզբունքն է, ըստ որի՝ իրավական ակտի բուն բովանդակությունը պետք է համապատասխանի որոշակիության պահանջներին, մասնավորապես, ընկալելի լինի հասցեատերերի համար, զերծ լինի համակարգային հակասություններից, չքողարկի իր իրավական կարգավորումը և հնարավորություն ընձեռի այն կատարելու համար: Պետք է փաստել, որ, նշված սկզբունքի համաձայն, իրավական ակտերը բողոքարկելու ժամկետներ են սահմանված նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքերով և այլ օրենքներով:

Հետևաբար, իրավական անորոշությունից խուսափելու համար անհրաժեշտ է օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները թողնել անփոփոխ:

Հարկ է նշել նաև, որ, համաձայն «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի, սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշման ընդունումից երեսուն օր հետո, ինչից հետևում է, որ սակագների բողոքարկման գործընթացի նախապատրաստման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված ժամկետն իրականում ոչ թե 7, այլ 37 օր է:

2. Երկրորդ առաջարկությունը, ըստ նախագծին կից հիմնավորման, պայմանավորված է օրենքի համապատասխան դրույթը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 91-րդ հոդվածին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ՝ ըստ որի՝

որևէ մարմին, այդ թվում՝ նաև հանձնաժողովը, իրավասու չէ քննարկելու արդարադատություն իրականացնող միակ մարմնի՝ դատարանի ակտերը:

Այդ կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ այդ հարցին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն անդրադարձել է 2007 թվականի հունվարի 16-ի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ ՍՍԴՈ-673 գործով ընդունված որոշմամբ: Մասնավորապես, համաձայն նշված որոշման, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանձնաժողովի որոշման բողոքարկման հարց քննելիս՝ դատական վերահսկողության խնդիրը ոչ թե այդ մարմնի՝ օրենքով սահմանված բացառիկ գործառույթների կրկնօրինակումն է, մասնավորապես, հանրային ծառայությունների սակագների դրույքաչափ սահմանելու, փոփոխելու միջոցով կամ անկախ գործելու իրավասությամբ օժտված մարմնի գործունեությանը շարունակական և գործառնական վերահսկողությամբ միջամտելը, այլ, հիմնվելով հանրային ծառայությունների բնագավառում հանձնաժողովի սակագնային և լիցենզավորման գործունեության, ինչպես նաև սպառողների իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական և օրենսդրական չափանիշների վրա, այդ մարմնի որոշումների՝ այդ թվում նաև՝ սակագների սահմանման վերաբերյալ օրինականությունը վերահսկելը: Այդ է վկայում նաև այլ պետությունների պրակտիկայի ուսումնասիրությունը, համաձայն որի սակագնային կարգավորում իրականացնող անկախ մարմինների որոշումները կարող են բողոքարկվել վարչաարդարադատական կարգով և այն էլ՝ օրենքին կամ իրավասությանը վերաբերող առարկայական հարցերի շրջանակներում:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ որևէ դատարան չի կարող սահմանել հանրային ծառայության սակագին կամ փոփոխել հանձնաժողովի սահմանած

սակագնի մեծությունը, այլ նշված ընդհանուր խնդրի շրջանակներում կարող է պարզել հանձ-նաժողովի կողմից կարգավորման օրենսդրական կարգի ու սկզբունքների պահպանումը»:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ Արեգ Գալստյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավա-րության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն
«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է վերացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումները դատական կարգով բողոքարկելու ժամկետային սահմանափակումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա **ազդեցություն չի նախատեսվում**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ՝ հանձնաժողովի սահմանած սակագնի մեծությունը դատական կարգով կարող է բողոքարկվել սակագնի մեծությունը սահմանող հանձնաժողովի իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից՝ առանց ժամկետային սահմանափակումների:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:
3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

««Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Վերը նշված ՀՀ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-834-14.07.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՕ-18-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասից հանել «՝ 7-օրյա ժամկետում» բառերը:

2. 3-րդ մասի «քննարկում է» բառերը փոխարինել «ի գիտություն է ընդունում» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՌԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկվող օրենքի նախագիծը հնարավորություն կընձեռի ՀՀ քաղաքացիներին եւ համապատասխան մարմիններին դատարանում վիճարկել ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի սակագնի մեծությունը սահմանելու վերաբերյալ ընդունած իրավական ակտը՝ առանց ժամկետային սահմանափակումների:

Նախագծով առաջարկվող մյուս փոփոխությունը միտված է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածը ՀՀ սահմանադրության 91-րդ հոդվածի դրույթներին համապատասխանեցնելուն (ՀՀ Սահմանադրություն Հոդված 91. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն

իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը եւ օրենքներին համապատասխան: Դատարանի վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից:) :

Քանի որ ՀՀ դատարանների վերջնական ակտերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից, ապա որեւէ այլ մարմին, այդ թվում նաեւ Հանրային ծառայությունները կարգավորող մարմինը իրավասու չէ քննարկման առարկա դարձնել ՀՀ դատարանների վիճիռը, այն կարող է ընդունվել միայն որպես ի գիտություն: Ներկայացված նախագծի 12-րդ հոդվածում առաջարկվում է «քննարկում է» բառերը փոխարինել «ի գիտություն է ընդունում» բառերով: